ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

0053, ԵՐԵՎԱՆ, ԱՐԻՆ ԲԵՐԴԻ 3 ՆՐԲԱՆՑՔ, 3 :

ՀԵՌ.: +374 10 472 760
ՖԱՔՍ +374 10 434 412; +374 10 472 771
էլեկտրոնային փոստ mailbox@yccpp.com

No: 156

27 . 03 . 2014թ
<<Շրջանակային համաձայնագրերով տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության գնման մասին>>

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հնարավոր մասնակիցների ղեկավարներին

Հարգելի Մասնակից

« ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություն:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում **«ԵՐՋԷԿ ՇՀԾՁԲ 11/3-14/7»**:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ, հասցեն՝ ք.Երևան, Արին բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեով մինչև 2014թ. Ապրիլի 8-ը, ժամը 10:00-ն: Ընթացակարգի հայտերը ստանում և հայտերի գրանցամատյանում գրանցում է հանձնաժողովի քարտուղար Արմեն Պետրոսյանը: Հայտերը քարտուղարի կողմից գրանցվում են գրանցամատյանում ըստ ստացման հերթականության՝ ծրարի վրա նշելով գրանցման համարը, օրը և ժամը:

Հայտերը կբացվեն <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ում, հասցեն՝ ք.Երևան, Արին բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3, 2014թ. Ապրիլի 8-ին, ժամը 10:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում <<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ կարիքների համար տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության ձեռքբերումը:

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի կարիքների համար՝ տրանսպորտային փոխադրումների ծառայության տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները, և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1.1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (հավելված N1), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (հավելված N2): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3» ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրերի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ purchase@yccpp.com:

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,
- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջվող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր 14 էջ:

Հարգանքով

Գնումների համակարգող՝
Պայմանագրային բաժնի
առաջատար մասնագետ

Ա. Պետրոսյան

Հավելված 1
**«ԵՐՋԷԿ-ՇՀԾՁԲ 11/3-14/7» ծածկագրով**
***ընթացակարգի հրավերի***
***N ................................ ծածկագրով***
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

## ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԴԻՄՈՒՄ

.................................................................-ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ի կողմից N ԵՐՋԷԿ-ՇՀԾՁԲ 11/3-14/6 ծածկագրով հայտարարված ընթացակարգի ................................................ չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

.................................................................-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

.................................................................-ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

.................................................................-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

.................................................................:
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

................................................................. ................................................
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

«........» .................. 20.....թ.
(ամսաթիվը, ամիսը)

**Հավելված 2**
**«ԵՐՋԷԿ-ՇՀԾՁԲ 11/3-14/7» ծածկագրով**
*ընթացակարգի հրավերի*
***N «ԵՐՋԷԿ-ՇՀԾՁԲ 11/3-14/7» ծածկագրով***
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

## Գ ն ի   ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ԵՐՋԷԿ-ՇՀԾՁԲ 11/22-14/6 ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը),այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ........................................-ն առաջարկում է
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

պայմանագիրը կատարել համաձայն հետևյալ գների՝

| Չափա-բաժինների համարները | Գնման առարկայի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը /պառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5=3+4 |
| 1 | Թափքի նորոգում՝ Մոսկվիչ - 412 | | | |
| 1 | Թափքի նորոգում՝ ԳԱԶ - 31029 | | | |
| 1 | Թափքի նորոգում՝ ԳԱԶ -3102 | | | |
| 1 | Թափքի նորոգում՝ ԳԱԶ -3110 | | | |
| 1 | Թափքի նորոգում՝ ԵՐԱԶ -762 | | | |
| 1 | Թափքի նորոգում՝ ՎԱԶ -21213 | | | |
| 1 | Շարժիչի տեխ սպասարկում և նորոգում՝ Մոսկվիչ - 412 | | | |
| 1 | Շարժիչի տեխ սպասարկում և նորոգում՝ ԳԱԶ - 31029 | | | |
| 1 | Շարժիչի տեխ սպասարկում և նորոգում՝ ԳԱԶ -3102 | | | |
| 1 | Շարժիչի տեխ սպասարկում և նորոգում՝ ԳԱԶ -3110 | | | |
| 1 | Շարժիչի տեխ սպասարկում և նորոգում՝ ԵՐԱԶ -762 | | | |
| 1 | Շարժիչի տեխ սպասարկում և նորոգում՝ ՎԱԶ -21213 | | | |
| 1 | Սնման և յուղման համակարգի տեխ սպասարկում և նորոգում՝ Մոսկվիչ - 412 | | | |
| 1 | Սնման և յուղման համակարգի տեխ սպասարկում և նորոգում՝ ԳԱԶ - 31029 | | | |
| 1 | Սնման և յուղման համակարգի տեխ սպասարկում և նորոգում՝ ԳԱԶ -3102 | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Սնման և յուղման համակարգի տեխ սպասարկում և նորոգում՝ ԳԱԶ -3110 | | | |
| 1 | Սնման և յուղման համակարգի տեխ սպասարկում և նորոգում՝ ԵՐԱԶ -762 | | | |
| 1 | Սնման և յուղման համակարգի տեխ սպասարկում և նորոգում՝ ՎԱԶ - 21213 | | | |
| 1 | Ղեկային համակարգի տեխ սպասարկում և նորոգում՝ Մոսկվիչ - 412 | | | |
| 1 | Ղեկային համակարգի տեխ սպասարկում և նորոգում՝ ԳԱԶ - 31029 | | | |
| 1 | Ղեկային համակարգի տեխ սպասարկում և նորոգում՝ ԳԱԶ -3102 | | | |
| 1 | Ղեկային համակարգի տեխ սպասարկում և նորոգում՝ ԳԱԶ -3110 | | | |
| 1 | Ղեկային համակարգի տեխ սպասարկում և նորոգում՝ ԵՐԱԶ -762 | | | |
| 1 | Ղեկային համակարգի տեխ սպասարկում և նորոգում՝ ՎԱԶ - 21213 | | | |
| 1 | Կցորդային համակարգի փոխանցման տուփի և կարդանային լիսեռի տեխ սպասարկում և նորոգում՝ Մոսկվիչ - 412 | | | |
| 1 | Կցորդային համակարգի փոխանցման տուփի և կարդանային լիսեռի տեխ սպասարկում և նորոգում՝ ԳԱԶ - 31029 | | | |
| 1 | Կցորդային համակարգի փոխանցման տուփի և կարդանային լիսեռի տեխ սպասարկում և նորոգում՝ ԳԱԶ -3102 | | | |
| 1 | Կցորդային համակարգի փոխանցման տուփի և կարդանային լիսեռի տեխ սպասարկում և նորոգում՝ ԳԱԶ -3110 | | | |
| 1 | Կցորդային համակարգի փոխանցման տուփի և կարդանային լիսեռի տեխ սպասարկում և նորոգում՝ ԵՐԱԶ -762 | | | |
| 1 | Կցորդային համակարգի փոխանցման տուփի և կարդանային լիսեռի տեխ սպասարկում և նորոգում՝ ՎԱԶ -21213 | | | |
| 1 | Առջևի և հետևի կամրջակների տեխ սպասարկում և նորոգում՝ Մոսկվիչ - 412 | | | |
| 1 | Առջևի և հետևի կամրջակների տեխ սպասարկում և նորոգում՝ ԳԱԶ - 31029 | | | |
| 1 | Առջևի և հետևի կամրջակների տեխ սպասարկում և նորոգում՝ ԳԱԶ -3102 | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1 | Առջևի և հետևի կամրջակների տեխ սպասարկում և նորոգում` ԳԱԶ -3110 | | | |
| 1 | Առջևի և հետևի կամրջակների տեխ սպասարկում և նորոգում` ԵՐԱԶ -762 | | | |
| 1 | Առջևի և հետևի կամրջակների տեխ սպասարկում և նորոգում` ՎԱԶ - 21213 | | | |
| 1 | Արգելակման ·համակարգի տեխ սպասարկում և նորոգում` Մոսկվիչ - 412 | | | |
| 1 | Արգելակման համակարգի տեխ սպասարկում և նորոգում` ԳԱԶ - 31029 | | | |
| 1 | Արգելակման համակարգի տեխ սպասարկում և նորոգում` ԳԱԶ -3102 | | | |
| 1 | Արգելակման համակարգի տեխ սպասարկում և նորոգում` ԳԱԶ -3110 | | | |
| 1 | Արգելակման համակարգի տեխ սպասարկում և նորոգում` ԵՐԱԶ -762 | | | |
| 1 | Արգելակման համակարգի տեխ սպասարկում և նորոգում` ՎԱԶ - 21213 | | | |
| 1 | Էլեկտրասարքավորումների տեխ սպասարկում և նորոգում` Մոսկվիչ - 412 | | | |
| 1 | Էլեկտրասարքավորումների տեխ սպասարկում և նորոգում` ԳԱԶ - 31029 | | | |
| 1 | Էլեկտրասարքավորումների տեխ սպասարկում և նորոգում` ԳԱԶ -3102 | | | |
| 1 | Էլեկտրասարքավորումների ի տեխ սպասարկում և նորոգում` ԳԱԶ -3110 | | | |
| 1 | Էլեկտրասարքավորումների տեխ սպասարկում և նորոգում` ԵՐԱԶ -762 | | | |
| 1 | Էլեկտրասարքավորումների տեխ սպասարկում և նորոգում` ՎԱԶ - 21213 | | | |
| | Ընդամենը | | | |

**3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*

**Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փչյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունյակում:.*

................................................

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը)

................................................

(ստորագրությունը)

Կ. Տ.

«........» ................ 20.... թ.

(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 1.1
Նախագիծ

# ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԾՁԲ-14/7

ք. Երևան « » ------------ 2014թ.

<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Հ. Հովհաննիսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝Պատվիրատու), մի կողմից, և ------------------------------ն, ի դեմս Ընկերության տնօրեն ----------------------ի (այսուհետև՝Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը, որպես «ԵՐՋԷԿ-ՇՀԾՁԲ 11/3-14/7» ծածկագրով հայտարարված գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի որոշմամբ առաջին տեղ զբաղեցրած մասնակից, ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագրի պահանջներին:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան:

## 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է ---------------------------------------- ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն՝ նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 25 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճորումն սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3 **Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

3.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն՝

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանել ոչ պատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրի համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

3.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա)մատուցված ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանաված պահանջներին.

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

3.2 **Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1.Կատարողին ներկայացնել հայտ ծառայությունների մատուցումը սկսելու վերաբերյալ և ծանուցում ծառայության մատուցման ավարտի վերաբերյալ:

3.2.2.Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

3.2.3. Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

3.3 **Կատարողն իրավունք ունի՝**

3.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

3.3.2 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 **Կատարողը պարտավոր է՝**

3.4.1.Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

3.4.2. **Ծառայությունների մատուցումը սկսել Պատվիրատուի կողմից հայտ ներկայացրած հայտում նշված ժամկետում և այն ավարտել Պատվիրատուից ծառայության մատուցման ավարտի վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո:**

3.4.3. Կատարողը պետք է Պատվիրատուին հայտի ներկայացման ժամանակ Պատվիրատուին ներկայացնի տրանսպորտային միջոցի գործարանային տեխնիկական անձնագիրը, շալանգի(կցորդիչի) գործարանային տեխնիկական տվյալները, անիվների քանակը:

3.4.4. Սույն պայմանագրով նախատեսված դեպքում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.5. Սույն պայամանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

## 4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N4):

4.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայամանգրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական)տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում, Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05(զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, իսկ տույժերի հաշվարկումն իրականացվում է օրացույցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. **ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. **ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ**

7.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն կնքելուց և ստորագրելուց հետո և գործում է մինչև պայմանագրային պարտավորությունների լրիվ ավարտը:

7,2,Պայմանագիրը իր գործողության ընթացքում կարող է վերանայվել միայն Համաձայն ՀՀ գործող օրենքների և Կողմերի համաձայնության դեպքում: Բոլոր փոփոխությունները ու լրացումները պետք է կատարվեն գրավոր, ստորագրված լինեն Կողմերի կողմից և վավերացվեն կնիքով:

7.3. Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցում.

2) Ծառայության մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

8. **ՏԱՐԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ**

8.1.Սույն պայմանագրի առընչությամբ կամ նրա շուրջ առաջացած վեճերը լուծվում են Կողմերի միջև բանակցությունների միջոցով: Համաձայնության չգալու դեպքում սույն կետը չի սահմանափակում Կողմերի իրավունքը վեճերը լուծելու դատական կարգով:

**9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

9.1.Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև գնման պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև գնման պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային գնման պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

9.2 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.4. Սույն պայմանագիրը կազմված է____էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:Սույն պայմանագրի N 1, 2, 3 և 4 հավելվածները՝ բաղկացած __ էջից հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.5 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունք չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.6 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվում է ՀՀ իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Պատվիրատու**

<<Երևանի ՋէԿ>> ՓԲԸ
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ, 3
ՀՎՀՀ 02205028
Հ/Հ 2473600002170010
<<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ
Շենգավիթ մասնաճյուղ

Գլխավոր տնօրեն՝

------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կատարող**

------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 1
___ __________ 2014թ. կնքված պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

## տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության

| | |
|---|---|
| 1 | Թափքի նորոգում: |
| 2 | Շարժիչի տեխ.սպասարկում և նորոգում: |
| 3 | Սնման և յուղման համակարգի տեխ.սպասարկում և նորոգում: |
| 4 | Ղեկային համակարգի տեխ.սպասարկում և նորոգում: |
| 5 | Կցորդման համակարգի, փոխանցման տուփի և կարդանային լիսեռի տեխ.սպասարկում և նորոգում: |
| 6 | Առջևի և հետևի կամրջակների տեխ.սպասարկում և նորոգում : |
| 7 | Արգելակային համակարգի տեխ.սպասարկում և նորոգում: |
| 8 | Էլեկտրասարքավորումների տեխ. սպասարկում և նորոգում: |

<u>Նորոգվող մեքենաների մակնիշները</u>

| | |
|---|---|
| 1 | Մոսկվիչ – 412 |
| 2 | ԳԱԶ – 31029 |
| 3 | ԳԱԶ – 3102 |
| 4 | ԳԱԶ – 3110 |
| 5 | ԵՐԱԶ – 762 |
| 6 | ՎԱԶ - 21213 |

<u>Պահանջները</u>

| | |
|---|---|
| 1 | Հեռավորությունը ԶԷԿ-ից ոչ ավելի 3.5 կմ: |
| 2 | Նորոգված հանգույցի 6-ամսյա երաշխիքային սպասարկում: |
| 3 | Վերանորոգման ժամանակ գործարանային, նոր պահեստամասերի տեղադրում: |
| 4 | Աշխատանքները կատարվեն Պատվիրատուի հայտից հետո Կողմերի միջև փոխհամաձայնեցված ժամկետում: |

**Պատվիրատու**

<<Երևանի ԶԷԿ>> ՓԲԸ
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ. 3
ՀՎՀՀ 02205028
Հ/Հ 2473600002170010
<<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ
Շենգավիթ մասնաճյուղ

Գլխավոր տնօրեն՝

----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կատարող**

----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 2
__ ________ 2014թ. կնքված
պայմանագրի

# ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| N ը/4 | Ծառայության անվանումը | Միավորի գինը | Չափման միավորը | Քանակը / նախատեսված է 2014թ. համար/ | | | | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | I եռամսյակ | II եռամսյակ | III եռամսյակ | IV եռամսյակ | Քանակը | Գինը |
| 1 | տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայության | | դրամ | - | | | | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | | | | | |

**Պատվիրատու**
<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ, 3
ՀՎՀՀ 02205028
Հ/Հ 2473600002170010
<<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ
Շենգավիթ մասնաճյուղ
Գլխավոր տնօրեն՝

---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Կատարող

---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված3
________________ 2014թ.կնքված
պայմանագրի

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| N | Ծառայության անվանումը | Նախատեսվում է ֆինանսավորել 20 14 թ.՝ ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը Տարի |
| 1. | | ... % | ... % | ...% | ... % | 10% | 10 % | 10 % | 10 % | 10 % | 10 % | 20 % | 20 % | **100 %** |

* *Վճարումները կկատարվեն համաձայն պայմանագրի վճարման կարգի:*

**Պատվիրատու**
<<Երևանի ՋԷԿ>> ՓԲԸ
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ, 3
ՀՎՀՀ 02205028
Հ/Հ 2473600002170010
<<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ
Շենգավիթ մասնաճյուղ
Գլխավոր տնօրեն՝

----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կատարող**

----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 4
___ __________ 2014թ. կնքված
պայմանագրի

**Պատվիրատու**
ք. Երևան, Արին Բերդի 3-րդ նրբ. 3
ՀՎՀՀ 02205028
Հ/Հ 2473600002170010
<<Արդշինինվեստ բանկ>> ՓԲԸ
Շենգավիթ մասնաճյուղ

**Կատարող**

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ու Թ Յ Ու Ն N ___
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«_______« «___________________« 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ ------------------------------------------------------------------------------------------

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «________« «__________________« 20 թ.

Պայմանագրի համարը՝_________________________.

Պատվիրատուն՝ ի դեմս____________________և Կատարողը՝ ի դեմս______________________________,

հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ ծառայություններ) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը «___« «__________« 20 թ-ից «____« «__________« 20 թ. ընկած ժամանակահատվածում կատարել է հետևյալ ծառայությունը.

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշները | Մատակարարումների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| **Ընդամենը** | ------------ | ------------ | | ------------ |

Վերոհիշյալ ծառայությունների կատարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

**Ծառայությունը հանձնեց**
(ստորագրություն)
ազգանուն ________________________
Կ.Տ

**Ծառայությունը ընդունեց**
(ստորագրություն)
ազգանուն ________________________
Կ.Տ